«Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպություն
Non-governmental organization "Armenian Lawyers' Association"
Общественная организация "Армянская ассоциация юристов"

ՀՀ, ք. Երևան 0010, Նալբանդյան 7, գրասենյակ 2
7 Nalbandyan Str., Suite 2, Yerevan 0010, RA
РА, Ереван 0010, ул. Налбандяна 7, офис 2

(+374 10) 540199
info@armla.am

№ 04/84
«01» 12 2025 թ.

Կադաստրի կոմիտեի ղեկավար
պարոն Սուրեն Թովմասյանին

Իրավաբանական անձ՝ «Իրավաբանների հայկական ասոցիացի» ՀԿ-ից

Գտնվելու վայրը՝ ք. Երևան , Նալբանդյան 7, գրասենյակ 2

ՀՎՀՀ՝ 01512352

Էլեկտրոնային փոստ՝ info@armla.am

Հեռախոսահամար՝ 096448871

ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՆԴԱՄԱԿՑԵԼՈՒ ՀԱՅՏ

Հարգելի պարոն Թովմասյան, խնդրում եմ ՀՀ վարչապետի 2025 թվականի սեպտեմբերի 22-ի N 835-Լ որոշման 4-րդ կետով հաստատված N 4 հավելվածի պահանջների համապատասխան ԻՀԱ ՀԿ-ի փոխնախագահ Մարատ Ատովմյանին ընդգրկել Կադաստրի կոմիտեի ղեկավարին կից հասարակական խորհրդի կազմում:

Մարզը կամ համայնքը, որտեղ հայտատու իրավաբանական անձը ծավալում է իր գործունեությունը. ք. Երևան

Կադաստրի կոմիտեի գործունեության այն ոլորտը, որում հայտատու իրավաբանական անձը ունի համապատասխան գործունեության փորձ կամ մասնագիտական փորձառություն.

Իրավաբանների հայկական ասոցիացիան, որպես իրավական ոլորտում ինստիտուցիոնալ փորձառություն ունեցող և մարդու իրավունքների պաշտպանության, իրավական քաղաքականությունների մշտադիտարկման ու պետական կառավարման բարեփոխումներում ներգրավվող կառույց, իր գործունեությամբ ձևավորել է այնպիսի կարողություններ, որոնք բխում են և համահունչ են նաև Կադաստրի կոմիտեի գործառույթների արդյունավետ իրականացմանը, նորմատիվ-իրավական դաշտի կատարելագործմանն ու վարչարարության բարելավմանն ուղղված ընթացիկ պետական քաղաքականություններին:

Ասոցիացիան տարիներ շարունակ իրականացրել է և ներկայումս իրականացնում է հետևյալ գործունեության ուղղությունները, որոնք ունեն անմիջական կիրառելիություն կադաստրային ոլորտի համար.

Օրենսդրության և նորմատիվ դաշտի իրավական փորձաքննություն

ԻՀԱ-ն իրականացնում է օրենսդրական նախաձեռնությունների, ենթաօրենսդրական ակտերի նախագծերի և քաղաքականության փաստաթղթերի մասնագիտական վերլուծություն՝ գնահատելով դրանց համահունչությունը՝

- իրավական անվտանգության չափանիշներին,
- սեփականության և գույքային իրավունքների պաշտպանության երաշխիքներին,
- վարչարարության թափանցիկության, կանխատեսելիության և իրավաչափության սկզբունքներին:

Այս փորձաքննությունները ներառում են նաև այն ոլորտները, որոնք կարող են օժանդակել Կադաստրի կոմիտեի գործունեությանը՝ անշարժ գույքի պետական գրանցում, սահմանային ու իրավական վերահսկողություն, հասցեավորում, գույքահարկի և կադաստրային արժեքների քաղաքականություն, տարածքային պլանավորում և գույքային իրավունքի սահմանափակումների վարչական պրակտիկա:

Հակակոռուպցիոն գնահատումներ և ռիսկերի վերլուծություն

Ասոցիացիան բազմիցս իրականացրել է հակակոռուպցիոն ուսումնասիրություններ, պետական ծառայությունների մատուցման ռիսկերի գնահատումներ և կառավարման թափանցիկության հմտություններ: Այս աշխատանքները ներառել են՝

- ոլորտային գործընթացների ռիսկերի քարտեզագրում,
- վարչական որոշումների կայացման մեխանիզմների իրավաչափության գնահատում,
- հանրային ծառայությունների մատուցման թափանցիկության մակարդակի վերլուծություն,
- առաջարկությունների մշակում՝ կոռուպցիոն ռիսկերի նվազեցման և խնդիրների արմատական վերականգնման ուղղությամբ:

Այս փորձը կիրառելի է հատկապես այն պայմաններում, երբ Կադաստրի կոմիտեի գործունեության զգալի մասը առնչվում է բարձր ռիսկայնության գոտիներին՝ անշարժ գույքի գործարքներ, գրանցման ընթացակարգեր, վարչական ակտերի ընդունում, գնահատումների և այս համակարգերին տրամադրվող տվյալների վստահելիություն:

Քաղաքացիների իրավունքների պաշտպանություն և հանրային վերահսկողություն

ԻՀԱ-ն երկար տարիներ իրականացնում է քաղաքացիներին տրամադրվող իրավական աջակցության, հասարակական վերահսկողության և իրավախախտումների փաստաթղթավորման գործունեություն: Դրա շրջանակում իրականացվել է.

- քաղաքացիներից ստացվող դիմումների հանգամանալից վերլուծություն,
- վարչական վարույթներում իրավաչափության գնահատում,
- զանգվածային կամ համակարգային իրավախախտումների նույնականացում,
- ոլորտային քաղաքականության բարելավման վերաբերյալ կառուցվածքային առաջարկությունների մշակում:

Այս աշխատանքներն ակնհայտ կապ ունեն կադաստրի ոլորտի հետ, քանի որ սեփականության իրավունքի իրացումը, գրանցման գործընթացները և դրանց հետ կապված վարչական ակտերը ուղղակիորեն ազդում են քաղաքացիների գույքային իրավունքների ապահովման վրա:

Անվճար իրավաբանական աջակցություն Արցախից բռնի տեղահանված անձանց և ՀՀ խոցելի խմբերին

ԻՀԱ-ն իրականացրել է և շարունակում է իրականացնել անվճար իրավաբանական աջակցություն Արցախի Հանրապետությունից բռնի տեղահանված անձանց, տրամադրելով խորհրդատվություն և ուղեկցում ինչպես իրենց ընդհանուր իրավունքների պաշտպանության, այնպես էլ կադաստրային, բնակարանային, գույքահավաք և գրանցման գործընթացներին վերաբերող հարցերում:

Տրամադրված աջակցությունն ընդգրկել է՝

- փաստաթղթերի ձեռքբերման և իրավական կարգի վերականգնման աջակցություն,
- վարչական գործընթացներին մասնագիտական ուղեկցում,
- սեփականության իրավունքի հաստատման, ճանաչման կամ վերականգնման հարցերի իրավական աջակցություն,
- պետական և տեղական մարմինների հետ հաղորդակցման աջակցություն:

Նման աջակցություն տրամադրվել է նաև Հայաստանի Հանրապետությունում սոցիալապես խոցելի խմբերին. բնակարանային իրավունքների պաշտպանություն, կադաստրային խնդիրների լուծում, վարչարարության բողոքարկում, վեճերի կարգավորում:

Այս գործունեությունը փաստում է, որ Ասոցիացիան ունի գործնական փորձ պետական մարմինների հետ աշխատանքի, քաղաքացիների գույքային իրավունքների պաշտպանման շրջանակում:

Իրազեկում և հանրային վերահսկողության մեխանիզմների ուժեղացում՝ iravaban.net-ի միջոցով

Ասոցիացիան գործարկում է iravaban.net մասնագիտացված իրավաբանական լրատվական հարթակը, որը բազմակողմանիորեն լուսաբանում է՝

- պետական կառավարման ոլորտները,
- գույքային ու կադաստրային հարաբերությունները,
- հակակոռուպցիոն քաղաքականության զարգացումները,
- քաղաքացիների գույքային իրավունքների իրացումը,
- վարչարարության թափանցիկությունը և հանրային վերահսկողության խնդիրները:

Այս հարթակը նպաստում է հանրային իրազեկման բարձրացմանը, ոլորտային թափանցիկության ապահովմանը և կառավարման մեխանիզմների հաշվետվողականության ուժեղացմանը (Ավելին՝ https://iravaban.net/533961.html , https://iravaban.net/533961.html , https://iravaban.net/430342.html , https://iravaban.net/530357.html , https://iravaban.net/420137.html , https://iravaban.net/379346.html , https://iravaban.net/372678.html):

Ընդհանուր առմամբ, Ասոցիացիայի կուտակած փորձը, իրականացված ծրագրերը, իրավական վերլուծական կարողությունները, հանրային վերահսկողության գործիքակազմը և խոցելի խմբերի հետ աշխատելու հաստատված մեխանիզմները հնարավորություն են տալիս արդյունավետ կերպով ներգրավվելու Կադաստրի կոմիտեի հասարակական խորհրդի

աշխատանքներում՝ նպաստելով ոլորտային բարեփոխումների առաջխաղացմանը, իրավաչափ վարչարարության ապահովմանը և քաղաքացիների գույքային իրավունքների պաշտպանությանը:

Իրավաբանական անձի հիմնական ներկայացուցիչ՝

Մարատ Լևոնի Ատովմյան

- անձնագրային տվյալներ՝
- կոնտակտային տվյալներ՝ matovmyan@gmail.com, +374

Հասարակական խորհրդի կազմում ներգրավվելու սույն հայտնի կից ներկայացնում ենք՝

1. ԻՀԱ-ի կանոնադրության լուսապատճեն,
2. ԻՀԱ-ի վերաբերյալ ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Պետական միասնական գրանցամատյանից քաղվածք առ 30.06.2020,
3. Վերջին հինգ տարվա ընթացքում առնվազն երեք տարվա գործունեության փորձի և այդ ժամանակահատվածում իրականացրած առնվազն երկու ծրագրերի մասին տեղեկատվություն,

Հարգանքով՝

Կարեն Զաքարյան

«Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ